

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Պատրաստողացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мунис“)

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Այս ապերախութիւնը—նրբին տեսու-
թիւնը կանոնադրութիւնը Նախկին խմբագրին:
Ներքին լուրեր:—Արտաքին տեսու-
թիւնը:—Յօդագրութիւնը:—Մշակութիւնը:
Յօդագրութիւնը:—Յայտարարութիւնները:—Բանասիրա-
կան: Խնդիր:

ԱՂԱ ԱՊԵՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ընթերցողը կը կարդայ «Մը-
շակի» ներկայ համարի ներքին
լուրերի բաժնում Կ. Պօլսից մեզ
հաղորդած այն լուրը, իբր թէ
թիւրքաց տէրութիւնը արգելել
է «Մշակ» լրագրին և «Փորձ»
ամսագրին թիւրքի մասերը:

Մենք հրաժարվում ենք հա-
ւատալ այդ տեսակ հրէշաւոր լու-
րին:

Ինչի համար այդ տեսակ խըս-
տութիւն մեզ դէմ է, ի՞նչ ենք ա-
րել մենք թիւրքի, թիւրքաց
տէրութեան, թիւրքաց պետու-
թեան դէմ...

Ի Ն Ն Թ Ը

ԱՐԿԱՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՓՈՒՐԲԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՍՏԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ե.

Այնքան պատերազմի մի քանի տարի առաջ,
Բագրատի դաւաճում, Ս. Յովհաննէս (Ուշ-
Քիլիսայի) վանքից ոչ այնքան հեռու, Եփրատի վե-
րին վտակներից մէկի ափի մօտ, դառնում էր Օ...
հայաբնակ գիւղը: Նա դրված էր մի բաւական
ընդարձակ հովտի մէջ, ուր ընտելւում էր խոտ-
ած այն բոլոր նկարները, ինչ որ պէտք էին նը-
բան գեղազարդելու համար: Հովտը տարածվել
էր երկու լեռնաշղթաների մէջ, որոնք ալիքաւոր
բարձրութիւններով չորջանակի սեղմել էին նրան
իրանց գրկում, տալով նրա տարածութեանը ձու-
ն և կերպարանք: Մէջտեղից ուր-մուր պոյոյո-
նեով անցնում էր Եփրատի վտակը, որին տեղա-
ցել կոչւում էին Ալ-սու, այսինքն սպիտակ ջուր:
Նա այնքան մաքուր էր, որ արժանի էր այդ կոչ-
մանը: Հովտի չորս կողմի սարերը պատած էին
հոխ արօտամարգերով, որոնք առաւ անունը էին
առիւս այնտեղ արածող բազմաթիւ անասունների
հօտերին, իսկ տափարակի ամբողջ հարթութիւնը
պատած էր ցորենի, գարու, կտաւհատի և զանա-
զան ընդդէմների արտերով: Այստեղ երկրագոր-
ծի աշխատող ձեռքը չէր թողել ոչ մի կտոր հող
անմշակ: Հովտի մէջ, մինը միւսից հեռու, գը-
տանվում էին մի քանի հայաբնակ գիւղեր, որոնք
թաղված էին այգիների և ձեռատունկ ծառերի
մէջ, և հեռուից նայողի աչքին ներկայանում էին
որպէս կանաչադարձ անտառիկներ, որոնք առան-
ձին խոտերով որոշվում էին տափարակի մերկու-
թիւնից, որ զօրկ էր ծառերից:

Հովտի բոլորովին ծայրուն էր դրած Օ... գիւ-
ղը մի գոգաւորված ձորակի մէջ: Տանուտէր խա-

Մենք չենք ուրանում որ «Մը-
շակը» միշտ անխնայ կերպով քըն-
նադատել է թիւրքաց պետու-
թեան այն կողմերը, նրա կեանքի
այն տղեղ երեւոյթները, նրա այն
խոշոր և աններելի սխալները, ո-
րոնք պատիւ չեն կարող բերել
ժամանակակից ոչ մի պետական
կազմակերպութեան:

Բայց մի թէ քննադատել նը-
շանակում է քննադատել...

Մենք գիտենք որ մեր ձայնը
անչափ աննշան է, որ թիւրքաց
պետութեան պէս մի նշանաւոր
պետութիւն ուշք դարձնէր մեր
իրան տուած խորհրդներին: Բայց
եթէ ուշադրութիւն էլ դարձնէր,
—կը քննադատէր նա, թէ կը շահ-
վէր մեր իրան տուած խորհուրդ-
ները ընդունելուց:

Վնաս է արդեօք մի պետու-
թեան, երբ նրան խորհուրդ են
տալիս չըճնշել հաւատարմի, ար-
դիւնաբերող, աշխատասէր ժողո-
վուրդը հայերի պէս: Ընդհար վը-

չօր բնակարանը—նրա իսկական անունը խաչա-
տուր էր—էր այն տներէն մէկը, որ թէ իր մեծու-
թեամբ և թէ հարստութեամբ որոշվում էր միւս-
ներից: Այս տնից ամեն առաւօտ քշում էին դէ-
պի նախիրը հարկի չափ անասուններ: Նրա կը-
վերը, գոմէշները, եղները և ձիաները էին ամե-
նաբնակները ամբողջ գիւղի մէջ: Այս տան էին
պատկանում հաղարի չափ ոչխարներ, որոնք սեփա-
կան հովիւների հսկողութեան ներքոյ արածում
էին մերձակայ լեռների վրա: Այդ տան էր պատ-
կանում այն ահալին ձիթանը—ձիթ դուրս բե-
րելու գործարանը, որ գտնվում էր գիւղի մէջ:
Այս տան էր պատկանում այն գեղեցիկ ջրա-
ղացը, որ գտնվում էր գիւղից դուրս, որի անիւ-
ները տարվայ բոլոր եղանակներում անդադար
բանում էին: Բայց այն, որ աւելի նշանաւոր էր
խաչօր հարստութեան մէջ—դրանք էին նրա եօ-
թն որդիները, որոնք մինը միւսի ետեւից հասած,
ներկայացնում էին նրա տան հաստատութեան
սիւները: Որդիները բոլորը ամուսնացած էին և
տունը լցված էր ամեն հասակի երեխաներով: Ա-
մուսնացած էին և նրա թոռներից մի քանիսը:
Նրանք նոյնպէս զաւակներ ունէին: Եւ ծերունի
խաչօր, որ աչքի առջև տեսնում էր մի քանի սե-
րունջ, երբ ամուսն էին միասին, որ գործում էին
միասին, որ կազմում էին մի փոքրիկ աշխարհ: Գիւ-
ղում առակի ձե էր ստացել այն խօսքը, թէ զխա-
չօր այնքան զաւակներ ունի, որքան անասուն-
ներն:

Խաչօր եօթն որդիներից առանց ամուսնանալու
մնացել էր ամենակրտսէրը, մանկահասակ Ստե-
փանիլը, որը զեռն ուր էր մտել իր տան և վեց
տարեկան հասակի մէջ: Բայց նրա ղէմքին նայե-
լով, կարելի էր իսկոյն նկատել, որ տարիներ
զեռն չէին տուել նրան այն պատանեկական հա-
սունքութիւնը, որ յատուկ էր այդ հասակին, մանա-
ւանդ մի անյայտի տաք երկրում, ուր պատանի-
ները խիստ վաղ աշխատում են: Ստեփանիլի ղէմքը
զեռն կրում էր իր վրա մանկական նուրբ քըն-
քընթիւններ իրանց հրապուրելի թարմութեամբ:
Նրա երեսը աւելի կանացի էր, քան թէ այրացի:
Խաչօր բոլոր որդիները դրսում իրանց առանձին
պարագմունքներ ունէին, թէ հողերի մշակու-
թեան մէջ և թէ անասունների դարմանելու մէջ,

նաա թէ օգուտ կը լինէր թիւր-
քիային, եթէ նա մեր խորհուրդը
ընդունելով, զսպէր հարստահարող
և բարբարոս քիւրդերին զէնք
տալով հայերի, թիւրքիայի այդ
ամենահաւատարմի զաւակների
ձեռքը, որպէս զի նրանք իրանք
կարողանային պաշտպանել իրանց
անձը ու պատիւը աւազակ քիւր-
դերի ու չէրկէսների յարձակում-
ների դէմ:

Մի թէ դորանով քնաս էինք
ուզում տալ թիւրքիային խոր-
հուրդ տալով նրան հաւասար ի-
րաւունքներ յայտնել իր բոլոր հը-
պատակներին, յայտնել դաւանու-
թիւնների հաւասարութիւնը, կամ
իր այս ու այն նահանգին ներ-
քին վարչական ինքնավարութիւն
տալ...

Վնաս կը լինէր, թէ օգուտ
թիւրքիային, եթէ նա մեր խոր-
հրդներին հետեւելով չը յափշտակ-
վէր Մշակայի նենգաւոր խոս-
տումներով, չը մտնէր Մշակայի

և խիստ հազիւ էին տանը գտնվում: Միայն Ստե-
փանիլն էր, որ շատ փոքր էր մասնակցում նրանց
աշխատութիւններին: Նա խաչօր Յովսէփի գեղեցիկ
էր, որին ծերունի նահապետը չէր հեռացնում իր
աչքից:

Ստեփանիլի և Յովսէփի—գեղեցիկ մէջ կային
շատ նմանութիւններ, ոչ այն պատճառով միայն,
որ նա խորաբերի որդու պէս սիրուն էր, հեղ
էր, խնայելի էր և համակրական էր,—այլ
և այն պատճառով, որ ինչպէս Յովսէփի,
այնպէս էլ Ստեփանիլի հագուստի և զարդարան-
քի վրա առանձին ուշադրութիւն էին դարձնում:
Նրա հազին միշտ կարելի էր տեսնել Հայերի
ծաղկաւոր բնակից գոյգոյն զօրով կարած
պատմութեամբ, որի վրա հագած ունէր ծիրանի
մանուկից պատրաստած թիւնոցը, որ զարդարած
էր ոսկէ թելերով: Մէջքը արդած էր Բիւրանի
չալէ գոտիով: Լայն չալվար պատրաստված էր
Վանայ նուրբ կերպագից, Ռոմիլին հագած ունէր
Արդուրի կարմիր կոշիկներ: Գլխին ծածկած ու-
նէր կարմիր ֆէս մետաքսեայ սև փունջով, որ
փաթաթած էր գունաւոր տուրբանով նոյնպէս
մետաքսեայ նուրբ գործունեներից: Ֆէսի տա-
կից հիանալի կերպով թափվել էին նրա զաւանա-
կի գոյն մազերը, որ ամբողջ էին ուսերի վրա:
Մի բանով միայն նա որոշվում էր Յովսէփի-գեղեցի-
կից, որ Յովսէփի եղբայրները նախանձիւմ էին
հօրից սիրված որդու վրա, բայց Ստեփանիլի եղ-
բայրները բոլորը սիրում էին նրան:

Ծերունի խաչօր տունը հեռուից բոլորովին հին
և նախնական ամրոցի տպաւորութիւն էր գործում:
Նա դառնվում էր մի բարձրաւանդակի վրա, և թէ
իր շինութեամբ, թէ դիրքով, ունէր այն բոլոր
յարմարութիւնները, որ պէտք էին մի անակութիւն
ազատ պահելու համար արտաքին թշնամիներից:
Այդ ամրոցը պատած էր չորս ահալին պարիսպ-
ներով, որոնք քառակուսի ձևով միմեանց հետ
միանալով, թողնում էին իրանց միջնաւայրում բա-
նական ընդարձակ տարածութիւն, որի վրա կա-
ռուցված էին զանազան շինութիւններ: Գրեթէ ո-
չինչ չէր կարելի տեսնել, բացի չորս բարձր աշ-
տարակներից, որոնք միացնում էին պարիսպնի
չորս անկիւնները: Ամրոցի չըջպարսպի մէջ զե-
ռնված էին բոլոր բնակութիւնները, բոլոր ծած-

գիրկը, չենկներ նրա լարած որո-
գայութների մէջ, չը նայէր Մշակ-
այի վրա որպէս իր քաղաքական
հօգուտեան յենակէտի վրա, այլ
որոնք այդ հաստատ յենակէտը
նոյն իսկ իր հպատակ և հաւա-
տարիմ ազգութիւնների ազատու-
թեան և բարօրութեան մէջ:

Մի թէ մի պետութեան լու-
սաւորվելու, ազատ, առաջադէմ
դառնալու խորհուրդ տուողը կա-
մենում է քնաս տալ այն պետու-
թեանը:

Բնական էր, ներքին էր որ թիւր-
քաց կառավարութիւնը, թիւրք
պետական մարդիկը ոչինչ ու-
շադրութիւն չը դարձնէին մեր
ձայնի վրա, բայց երբ մի անգամ
ուշադրութիւն դարձրին,—այնու-
հետեւ ամենամանրէն ապերախ-
տութիւն է նրանց կողմից մեր
իրանց տուած խորհուրդները վը-
նասակար համարել, փոխանակ
աշխատելու օգուտ քաղել այդ օգ-
տակար խորհուրդներից:

Կոյները, որ պէտք էին մի կանոնաւոր անտեսու-
թեան համար: Այստեղ էր ոչխարների գետնափոր
գոմը, այստեղ էր ձիերի, կովերի և գոմէշների
փարսիք, որ, անասունների տեսակի համեմատ,
առանձին-առանձին բաժանուէրներ ունէր: Այս-
տեղ էր սարայը երկրագործական անօթները պա-
հելու համար. այստեղ էր մարագը, յաղանոցը,
խոտանոցը, որոնց մէջ պահվում էր անասունները
զարմանելու պաշարը, այստեղ կային զանազան
մասաններ, զանազան ամբարներ մշակութեան
բերքերի համար: Այստեղ կային և մի քանի խու-
ղեր, որոնց մէջ ընկնում էին ծերունի խաչօր հո-
վիւնները և ծառաները իրանց ընտանիքներով: Դը-
րանք բոլորն ազգով ծուրդ էին, կրկնեք ծառա-
յում էին որպէս աղախներ, իսկ աղամարդիկը
որպէս նախարարներ, հովիւներ կամ երկրագոր-
ծական մշակներ: Մի խօսքով, այդ ամրոցի մէջ
բովանդակվում էր մի փոքրիկ գիւղ, որի միակ
տէրը և պետը ծերունի խաչօրն էր:

Նրա գերդաստանի համար որոշված բնակարան-
ները իրանց շինութեամբ և բաժանութեամբ այն-
քան բազմատեսակ և բազմադեպ չէին, որպէս
այդ յօրինել է մեր նոր և քաղաքակրթված աշխար-
հը: Այլ զեռն ևս պահպանել էին այն նախնական
պարզութիւնը և ձևը, երբ մի ամբողջ ընտանիք
ապրում էր մի վրանի մէջ, այն զանազանութեամբ
միայն, որ այժմ այդ վրանին փոխարինում էր քա-
րեղէն շինութեամբ: Նրա բազմաթիւ որդիների հա-
մար, որոնք իւրաքանչիւրը իր զաւակներով մի մեծ
ընտանիք կարող էր կազմել, առանձին սենեակներ
չը կային, այլ բոլորը ապրում էին մի և նոյն յար-
կի տակ, մի և նոյն սենեակում, որ ուրիշ ոչինչ
չէր, եթէ ոչ չորս պատ, ծածկած ահալին գերան-
ներով: Այստեղ վառում էին, այստեղ թխում էին,
այստեղ կերակուր էին պատրաստում, այստեղ բո-
լորը միասին ուտում էին և այստեղ բոլորը միասին
պառւում էին: Այստեղ կարելի էր տեսնել նորա-
ծին հորթեր, փաթիլի ուլեր, որոնք խառնված երե-
խանքի հետ, մեղմում էին, թուլանում էին, ա-
ղաղակում էին և տունը լցնում էին կենդանի աղ-
մուկով: Այստեղ հաւերը շատ անգամ ներս էին
մտնում և յատակից քաղում էին փշանքներ կամ
ուրիշ այս տեսակ բաներ, որոնք երեխաների ձեռ-
քից անխնայ ցած էին թափվում: Մի խօսքով, զա-

Միթէ թիւրքաց պետութեան քաղաքական մարդիկ, որոնք այժմ արգելեցին իրանց երկրի մէջ «Մշակի» մտնելը, չեն հասկացել մինչև այժմ, որ եթէ հետեւէին մեր խորհուրդներին, թիւրքիւն այժմ երջանիկ երկիր կը լինէր:

Միթէ մէկի երեսին ճշմարտութիւն ասելը, մէկին օգտակար խորհուրդներ տալը, թէև խիստ և անխնայ մտրակող ձև տալով իր խօսքերին՝ նշանակում է նրան փնաս ուզել: Ճշմարտութեան ձայնի դէմ ականջների մէջ բամբակ կոխելը, — դա ոչ թէ միայն ապերախութիւն է, բայց և դատապարտելի անհեռատեսութիւն է:

Այդ տեսակ վարմունք անուանվում է քաղաքական անձնասպանութիւն:

Կամ միթէ դորանով ենք փնասել թիւրքիային որ այժմ թէ «Մշակը» և թէ «Փորձը» իրանց յանձն առած հանգանակութիւններով օգնում են Հայաստանի սովատանջ ազգաբնակչութեանը: Դիցուք թէ «Մշակը» կամ «Փորձը» այդ անում են դէպի իրանց թիւրքիացի ցեղակիցները ունեցած լոկ ազգասիրական զգացմունքից դրդված, — բայց հետեւանք նոյն է մնում: Գիտակցաբար թէ ան-

գիտակցաբար մենք աշխատում ենք օգնութիւն հասցնել մեր պետութեան հարեան մի պետութեան թշուառ զաւակներին, ուրեմն դորանով իսկապէս օգուտ ենք բերում նոյն իսկ ամբողջ պետութեանը:

Եթէ ստուգվի մեզ հաղորդված անհաւատալի լուրը, — մենք թիւրքաց կառավարութեան արածը մեզ դէմ ուրիշ անունով չենք կարողանայ դրոշմել, եթէ ոչ ամենասե ապերախութիւն, և մի և նոյն ժամանակ ամենաանտակտ, ամենաանգործնական քաղաքական անհեռատեսութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԼԱՅՈՒՆԻՆ ԳՐԱԴԵՐԻ ԼՐԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

I

Ընկերութեան նպատակը, կազմութիւնը և միջոցները:

§ 1. «Թիֆլիսի ընկերութիւն» հայերէն գրքերի հրատարակութեան հիմնվում է Թիֆլիսում և նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուով թէ ինքնուրոյն և թէ թարգմանած գրքեր:

Մանօթութիւնը. Ընկերութեան հրատարակութիւնները ենթարկվում են տպագրութեան ընդհանուր կանոնադրութեանց:

Հօր տան դրան մօտ, որ տեսնեն, թէ ինչպէս էին պահել և խնամվել նրա անասունները:

— Այդ լոյս, տանուտէր խաչօ, հարցրեց նրան գիւղացիներից մէկը. — այսօր տղերքը ուզում են զետեղել հանքը գոմէշներին:

— Հա, ժամանակն է, մինչև երբ ներսումը պահենք. տէրտէրից հարցրի, ասաց զօրը բարի է. ես էլ կամեցայ, որ այսօր դուրս հանեն, պատասխանեց տանուտէրը, մի առանձին նշանակութիւն տալով քահանայի խօսքերին:

Այս միջոցին ներսից լսվեցան զանգակի ձայներ և բազմութիւնը յետ քաջկեցաւ ճանապարհ բաց անելու համար:

— Այդ ջօրան է, լսելի եղաւ ամեն կողմից: Չօրայ կոչում էին տանուտէրի նշանաւոր գոմէշներից մէկին, որի ձակաւոր սպիտակ լուսնաձև պիտակ ունէր և որը հաշակված էր իր ուժով և մեծութեամբ: Արիւթի անասունը փռնչալով, մռնչելով, դուրս արժաւ տան դրնից: Գետինը դողդոջում էր նրա ոտների տակ: Նա յանկարծ կանգ առեց դրան առջևի հրապարակի վրա, և գլուխը վեր բարձրացնելով, սկսեց նայել իր շուրջը: Նոյն միջոցին ծերունի տանուտէրը զարկեց նրա ձակաւոր մի ամբողջ անիմ ձու: Չօրան փշրվեցաւ և դեղնագոյն հեղուկը տարածվեցաւ սպիտակ ձակաւոր վրա: Այդ նրա համար էր, որ չարը իսկապէս և նրան զայն չառնէ: Չօրան այդ գործողութիւնից խրտնեցաւ, և եղջիւրները թափ տալով, մի սարսափելի թռիչք գործեց և յարձակվեցաւ այնտեղ հաւաքված ամբողջ վրա: Նոյն միջոցին վրա հասան ծերունու որդիները և ահագին մահախնկով աշխատում էին յետ դարձնել ամենի անասունին: Մարդկային ուժը պատերազմում էր վարդերի ուժի դէմ: Փարախի մթութիւնից դէպի լոյս աշխարհ դուրս գալով, Չօրայ անսովոր աչքերին ամեն առարկայ անորոշ ձևով և մռայլ մէջ էր տեսնում: Նա այժմ մինչև անգամ չէր ճանաչում իր տէրերին, որ ամբողջ ծրմնեղ նրան կերակրել էին և որոնք ձեռքերը շատ անգամ խնայարկութեամբ լիզել էր նա իր հանգստութեան ժամանակ: Կատաղի մոլեղնութեան մէջ յարձակվում էր նա այս կողմ և այն կողմ: Ընդգնաղութիւնը անհայտն էր: Խաչօի վեց որդիները ամեն կողմից հարուածում էին նրան: Բայց

§ 2. Ընկերութեան կազմողներն են՝ իսկական, մշտնջենաւոր, պատույ և աշխատակից անդամք: Անդամ կարող են լինել երկու սեռից: Անդամների թիւը սահմանափակուած չէ:

§ 3. Ընկերութեան հասցիքն է՝ ա. տարեկան և միանուագ վճարները. բ. ընկերութեան տպագրութեանց վաճառմունքից զուրկացած գումարը և գ. թատրոնական ներկայացումներից, կոնցերտներից, հրապարակական դասախոսութիւններից և այլ՝ օրէնքով թոյլ տուած ձեռնարկութիւններից կայացած արդիւնքը:

II

Անդամների ընտրութիւնը, նոյնա իրաւունքները և պարտականութիւնները:

§ 4. Իսկական, մշտնջենաւոր և աշխատակից անդամ ընտրում է Վարչութիւնը, իսկ պատույ անդամ ընտրում է Ընդհանուր ժողովը:

§ 5. Պատույ անդամ ընտրվում են այն անձինք, որոնք իւրեանց անձնական արժանաւորութեամբ, կամ իւրեանց հասարակական դրութեամբ կարող են առանձնապէս օգուտ տալ Ընկերութեանը:

§ 6. Աշխատակից անդամ ընտրվում են այն անձինք, որոնք իւրեանց աշխատանքով կամ գիտութեամբ կարող են Ընկերութեանը օգտուած լինել: Աշխատակից անդամները ընտրվում են մի տարով:

§ 7. Այն այձինք, որոնք միանուագ նուիրում են ընկերութեանը ոչ պակաս քան հարիւր ռուբլի, կարող են մշտնջենաւոր անդամ ընտրուել:

§ 8. Իսկական անդամը վճարում է տարեկան վեց ռուբլի:

Մանօթ. Այն իսկական անդամը, որ վեց ամսուայ ընթացքում չէ վճարել իւր տարեկան վճարը, համարվում է Ընկերութեան անդամակցութիւնից հրաժարուած:

անդամներ մահախնկով հարուածները ընդունում էր նա որպէս մի թիթի տալով զարկ: Ծերունի տանուտէրը, հեռու կանգնած, լի հրճուածով նայում էր այդ սոսկալի կռիւին, որ կարող էր պատել բերել ամենանշանաւոր հուղմէական կրիէսին: Նրա աչքերի առջև հանդիսանում էին երկու չափազանց ուժեղ, մէկը իր քաջ որդիների ուժը, մյուսը՝ իր վրիթարի անասունի ուժը: Երկուսն էլ հաւասար նշանակութիւն ունէին նրա համար: Այդ երկու ուժերից կախումն ունէին նրա տրնտեսութեան բոլոր աշխատութիւնները: Այժմ կռիւը աւելի սաստկացաւ: Որովհետեւ կտրվեցաւ Չօրայի վրէ հաստ չղթած, օրից քարշ էին տուած: մի անգամից գերանի կտոր, որպէս զի արգելէր նրա համարձակ քայլերը: Գիւղացիները չուանեցին զրա վազեցին, որ կաշկանդեն նրան: Բայց ամենի անասունի ամեն մի շարժումը բաւական էր չուանները կտրատելու համար: Նա յարձակվում էր դէպի ամեն կողմ և ամբողջ ճանձների նման փախում էր նրա առջևից: Այդ զարհուրելի խռնովութեան միջոցին կատարվեցաւ մի հրաշալի քայլութիւն: Ծերունի տանուտէրի միջնակ որդին, որին կոչում էին Այօ, առիծի ճարպկութեամբ վրա վազեց և բռնեց Չօրայի պոչից: Կատաղած անասունը, նկատելով այդ արամարհական յանդգնութիւնը, շտապեց գլուխը յետ դարձնել, որ իր եղջիւրներով պատժէ անդամին: Գործվեցան մի քանի սաստիկ պտոյտներ: Չօրան աշխատում էր յետ դառնալ, որ հարուածէ իր հակառակորդին, բայց Այօն նրա պոչից պինդ բռնած, պտոյտվում էր նրա հետ: Այդ մենամարտութիւնը տեսեց մի քանի օրպէ: Ամեն կողմից լսելի էին լինում զարհուրանքի ձայներ: Չայրացած գազանը մտնում էր և գետնի մէջ աւօսներ էր ձգում իր ոտների շարժումներով: Թանձր փոշին վեր էր բարձրանում և երկու կռուողները կորած էին հողից: Դրան ամպի մէջ, Նոյն միջոցին վրա հասան Այօի եղբայրները և չղթաներով կաշկանդեցին Չօրային: Ամեն կողմից այժմ լսելի եղան ուրախութեան ձայներ:

Ծերունի տանուտէրը մօտեցաւ Այօին, և նրա ձակաւոր համբուրելով, ասաց. — Աստուծոյ աչքը թող քո վրան լինի, որդի, դու իմ երեսը սիրտակացիր:

§ 9. Ընկերութեան ընդհանուր ժողովներ լինել են իսկապէս գտնուող ամեն կարգի երկու սեռ անդամները ընտրողական ձայն ունեն և ընտրելի են Ընկերութեան ամեն պաշտօնների համար:

III

Պաշտօնական անձինք և նոյնա ընտրութիւնը:

§ 10. Ընկերութեան գործերը կառավարում են՝ ա. Վարչութիւնը և բ. Խմբագրական մասնաժողովը:

§ 11. Վարչութեան պաշտօնական անձինքն են՝ ատենապետ, փոխատենապետ, երկու անդամք, ատենադպիր, գանձապահ և գրապահ:

§ 12. Վարչութիւնը վարում է ընկերութեան տնտեսական մասը, քննում է նորա դրամական հաշիւները և գումարը, պաշտպանում է, ուր պէտք է, նորա շահերը, պատրաստում է տարեկան ընդհանուր հաշիւը Ընկերութեան աշխատութեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին, ներկայացնում է ծախուց հաշիւը մօտաւորապէս և հոգում է Խմբագրական մասնաժողովի ընդունած գրքերի տպագրութեան մասին: Վարչութեան կողմից են լինում բոլոր բանակցութիւնները որ և իցէ հաստատութեանց և անձանց հետ:

§ 13. Վարչութեան ատենապետը հսկողութիւն ունի, որ ձգրութեամբ կատարուին այն կանոնադրութիւնը և Ընդհանուր ժողովի, Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի վճիռները:

§ 14. Ատենապետի բացակայութեան ժամանակ նրա պաշտօնը վարում է փոխատենապետը:

§ 15. Վարչութեան ատենադպիրը կազմում է Ընդհանուր ժողովի և Վարչութեան նստերի արձանագրութիւնները: Նա վարում է դիւանական գործերը և պահում է գրութիւնները:

§ 16. Վարչութեան գանձապահը վարում

Այս խօսքերով նա կամեցաւ յայտնել, որ Այօն չը թողցէ հօրը ամաչել ժողովրդի առջև: Եւ տայ նա մօտեցաւ Չօրային, որպէս իր միւս զաւակին, և ձեռքով նրա գլուխը շոյելով, ասաց.

— Չարածին, ինչու էիր այսպիսի գոթութիւն անում:

Բայց Չօրան այժմ հանգիստ էր. նրա աչքերի մօտայր փարատվել էր. նա այժմ ճանաչում էր իր տէրերին, և, կարծես, փօշմանել էր իր գոթութեան վրա: Նրա պարանոցից կրկին կապեցին հաստ չղթան, կրկին չղթայից քարշ տուեցին ահագին գերանի կտորը, որի միւս ծայրը հանում էր գետին և անցնում էր անասունի առջևի երկու ոտների միջից, և այնուհետեւ սկսեցին քշել դէպի գետը, որ լուսնան, որ զովանեն նրան սառը ջրի մէջ:

Գիւղացիների բազմութիւնը դեռ չէր հեռացել ծերունի խաչօի տան դրնից, որովհետեւ Չօրայից յետոյ պէտք է դուրս բերէին միւս գոմէշներին, որոնք մինը միւսից աւելի ամենի էին: Բայց այս անգամ ծերունու որդիները աւելի զգուշութիւններ գործ զրեցին և մի առանձին անակարգութիւն չէ պատահեցաւ: Նրանք հերթով դուրս էին բերում գեղեցիկ, առողջ, գէր ու պարարտ անասուններին, որոնց իւրաքանչիւրը ամեն մի գիւղացու տնտեսական հանդիսարանի մէջ կարող էր առաջին մրցանակը ստանալ: Տանուտէրը հիացմունքով նայում էր նրանց վրա, և փշրում էր նրանց ձակաւոր կախարհական ձուռն, որ ազատ պահէ չաչքից, Բացի դրանից, նա տէրտէրին գրել էր տուել մի-մի թիթիսմական աղօթք, և եռանկիւնի ձեռք կանաչագոյն կաշու մէջ կարելով, քարշ էր տուել իր անասունների պարանոցից: Գիւղացիները տեսնելով, գովում էին խաչօի որդիներին, որ կարողացել էին այնպէս լաւ պահել իրանց անասուններին: Հայրը, լսելով իր որդիների գովասանքը, ուրախանում էր: Այսպէս պէտք է նրանք ամեն օր դուրս բերէին զխաչօ պահած անասուններին, մինչև մի փոքր ընտելանային, մինչև մի փոքր սովորէին դրսի օդին և լոյսին, որ այնուհետեւ սկսէին հերկը հերկել:

(Կը չարունակվի)

Նոյն տապանն էր, ուր զետեղված էին ամեն տեսակ կենդանիներ: Այդ բնակարանին կից էր մի երկրորդը: Գա առաջինից զանազանվում էր նրանով միայն, որ առջևի ձակաւոր բոլորովին բաց էր և նայում էր բակին: Դրան կոչում էին սրահ և ծառայում էր որպէս ամառուայ բնակարան: Սրահի միջից բացվում էր մի դուռն գլխաւոր սենեակի մէջ, և այսպիսով նա ներկայացնում էր բուն բնակարանի նախաբակի: Դրանց կողքին կար մի առանձին փոքրիկ սենեակ, որին կոչում էին օղաչ, նրա դրները բացվում էին այն ժամանակ միայն, երբ տանը հիւր էր գալիս, և միշտ պահվում էր մաքուր ու զարդարված:

Զ.

Չը նայելով կեցութեան այդ անշուք և պարզ ձևին, կենքը այդ նահապետական տան մէջ սահում էր ուրախ և լի ամեն բաւականութիւններով: Աշխատանքը անդադար եւ էր գալիս և Աստուծոյ օրհնութիւնը թափվում էր այստեղ իր բարութիւններով: Ծերունի խաչօի ամբարները միշտ լիքն էին լինում ցորենով, իւրով, ձէթով և գինիով: Տարվայ բոլոր եղանակներից օգուտ էր քաղում նա: Թէ ցուրտ և թէ տաք օրովայ համար նա միշտ գործ և պարապմունքներ ունէր:

Այն լեռների ձիւնը սկսեց հալվել, դաշտերը վաղուց ծպտում են գեղեցիկ կանաչով: Գարուն է՝ Օրը տոգորված անուշահոտ վերմութեամբ կենքը և սփռում դէպի ամեն կողմ: Չորերի միջից վազում են հարկուաւոր աղմկալի վտաններ և օձապոյտ ընթացքով տարածվում են հովտի մէջ: Նորեկ ձիւնեռնակը հրախրում է մշակին դէպի գործ: Խաչօի որդիները արդէն պատրաստել են արօրը և գութանը:

Արեւ դեռ նոր է սկսել ծագել. դեռ նոր սարերի ձիւնապատ գագաթները վառվում են վարդագոյն ճառագայթներով: Ծերունին դառնում է առաւօտեան ժամից, աչ և ձախ ամեն հանդիպած մարդուն շողորմ: Աստուծածառ առկով: Նրա որդիները այսօր առաջին անգամ պէտք է դուրս բերեն եղջերին և գոմէշներին, որոնք ամբողջ ձմեռը ախոռում կերել, զիբացել, հանգստացել են, և ամենակն դրսի լոյսը չեն տեսել: Մեծ զուարճութիւն է գիւղացու համար այս տեսարանը, և այս պատճառով նրանցից շատերը հաւաքվել էին խա-
